

## ԵԿԵՂԵՑԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 1930-ԱԿԱՆ ԹՎԵՐԻՆ

Ա. Ս. ՄԱՆՈՒԿՅԱՆ

20-րդ դարի սկզբներին ծավալված պատմական իրադարձությունները, աշխարհաքաղաքական արժատական փոփոխություններն իրենց խոր ազդեցությունը թողեցին հայ իրականության վրա: Հեղափոխական լայնածավալ շարժումներ, առաջին աշխարհամարտ, ցեղասպանություն մի ողջ ազգի նկատմամբ և, ի վերջո, Արևելյան Հայաստանում ստեղծված մի փոքրատարածք հանրապետություն: Թվում էր՝ այս ամենից հետո տարածքային ու մարդկային հսկայական կորուստներ կրած ազգը հնարավորություն ստացավ մի փոքր շունչ առնելու, սակայն 30-ական թվականներին սկսված և 1937—38 թթ. բարձրակետին հասած բռնությունները ԽՍՀՄ-ում նոր փորձության առաջ կանգնեցրին հայ ժողովրդին: Եվ, ինչպես միշտ, ժողովրդին ուղղված առաջին ու ամենադաժան հարվածներն իր վրա ընդունեց եկեղեցին:

Խորհրդային երկրի անդրանիկ դեկրետներից մեկով եկեղեցին անջատվեց պետությունից, և աթեիստական ընդգծված գաղափարախոսությունը առաջնորդվող տերությունն առանձնապես մտահոգված չէր թաքցնելու իր բացասական վերաբերմունքը դեպի կրոնն ու եկեղեցին: Ծիշտ է, հռչակված էր խղճի ազատություն, բայց, պահպանելով արտաքին, հիմնականում արտասահմանի համար ցուցադրվող հանդուրժողականությունը, իրականում իշխանություններն ամեն ինչ անում էին կրոնը և նրա սպասավորներին վարկարկելու համար:

1920 թ. նոյեմբերի 29-ին խորհրդային կարգեր հաստատվեցին Հայաստանում, և արդեն դեկտեմբերի 17-ին հրապարակվեց դեկրետ «Հոգևոր հաստատություններին պատկանող կուլտուրական հիմնարկությունների պետականացման մասին», որով նշված հիմնարկությունները անցան լուսժողկոմատի տնօրինության տակ<sup>1</sup>: Նույն թվի դեկտեմբերի 31-ին ՀԽՍՀ լուսժողկոմատի հրամանով արգելվեցին կրոնական առարկաների դասավանդումը և կրոնական ծեսերի կատարումը դպրոցներում<sup>2</sup>: Իշխանությունների՝ 1921 թ. նոյեմբերի 17-ի որոշմամբ հոգևորականները զրկվեցին ընտրելու և ընտրվելու իրավունքից, իսկ 1922 թ. փետրվարի 2-ին Հայաստանի խորհուրդների 1-ին համագումարում ընդունված սահմանադրության 6-րդ հոդվածով եկեղեցին անջատվեց պետությունից և դպրոցը եկեղեցուց: Դա նշանակում էր, որ եկեղեցին դադարեց իրավական անձի իրավունքից, որևէ սեփականություն ձեռք բերելու իրավունքից, որին հետևեցին եկեղեցուն պատկանող շարժական և անշարժ գույքի գրավումներն ու դրանց պետական սեփականության հռչակումը, որով եկեղեցին զրկվեց իր տնտեսական հիմքից:

Ինչպես ԽՍՀՄ ողջ տարածքում, այնպես էլ Հայաստանում, իշխանու-

<sup>1</sup> «Կոմունիստ», 18 դեկտեմբերի 1920 թ.:

<sup>2</sup> «Կոմունիստ», 4 հունվարի 1921 թ. և 6 հունվարի 1931 թ.:

թյունները կրոնի դեմ ակտիվ պայքարի էին բարձրացրել անաստվածների միությունը և «Ազատ եկեղեցական եղբայրություն» անունը կրող եկեղեցական ընդդիմությունը, որի ղեկավարներն էին Հայաստանում Աշոտ եպիսկոպոսը, Բենիկ վարդապետը, քահանաներ Մեսրոպ Մելյանը, Տեր-Հարությունյանը, Տեր-Պետրոսյանը, Խոյեցյանը և ուրիշներ<sup>3</sup>։ Զիտրանալով «Ազատ եկեղեցի» ամսագրի հրատարակելու փորձ արած այդ կազմակերպության գործունեության մանրամասների մեջ՝ նշենք, որ 1927 թ. վախճանված Աշոտ եպիսկոպոսը մահից առաջ նամակ է հղում Գևորգ Ե կաթողիկոսին, որտեղ խոստովանում է իր կատարած քայլի սխալությունը և խնդրում վերադարձնել իր կոչումը<sup>4</sup>։

1920—30-ական թթ. զանգվածային բնույթ էին կրում հատկապես եկեղեցիների բռնագրավումները, որի մասին է վկայում նաև 1929 թ. մարտին ՀԽՍՀ ՆԳժԿ-ին ուղղված Խորեն արքեպիսկոպոսի նամակը։ Վերջինս ներկայացրել է Հայաստանի գրեթե բոլոր շրջանները պատկերող մի պատկանելի ցուցակ, որտեղ բռնագրավվել էին եկեղեցիները<sup>5</sup>։

1929—1930 թթ. ԽՍՀՄ-ում ծավալված համատարած կոլեկտիվացման շարժումը հարմար պատրվակ դարձավ կրոնական դասի ներկայացուցիչների նկատմամբ բացահայտ հալածանքներ սկսելու համար։ Դասակարգային պայքարի սրման կարգախոսով անցկացվող կոլեկտիվացման ժամանակ սկիզբ առան «ժողովրդի թշնամիների» զանգվածային բացահայտումներն ու բռնությունները նաև գյուղական շրջաններում բնակվող քահանաների և կրոնական այլ ներկայացուցիչների նկատմամբ։

Զանգվածային բռնություններին հատկապես նպաստեց ԽՍՀՄ Կենտգործկոմի և Ժողովրդի թշնամիների 1930 թ. փետրվարի 1-ի որոշումը, որը վերացրեց մինչև այդ գործող այն օրենքը, որով անհատ տնտեսություններին թույլատրվում էր հողի վարձակալումն ու վարձու աշխատանքի օգտագործումը։ Այդ որոշումով համատարած կոլեկտիվացման վայրերում տեղական իշխանության մարմիններին իրավունք էր վերապահվում բռնագրավել կուլակային տնտեսությունների արտադրական միջոցները, տնտեսական կառույցները, իսկ դրանց տերերին՝ արտաքսել հեռավոր վայրեր<sup>6</sup>։

Այն, որ ինչպես ամբողջ ԽՍՀՄ տարածքում, այնպես էլ Հայաստանում, իշխանությունները գրավել էին խիստ հակակրոնական դիրքորոշում, ակնհայտ էր անցած տասը տարիների նրանց գործողություններից։ Այդ մասին է վկայում նաև 1929 թ. մարտի 14-ին ԶԿ(բ)Կ ԿԿ «Հակակրոնական աշխատանքի ուժեղացման մասին» նամակը, որը ուղարկվել էր բոլոր գավկոմներին, ԼԿԵՄ Կենտկոմին, լուսժողովմատի գլխավոր վարչություններին և ՇԱՄԽ-ի կուլտրաթնին։ Փաստաթղթում մասնավորապես նշված էր, որ «Դասակարգային պայքարի սրմամբ հակախորհրդային էլեմենտները, կուլակը, նէպմանը, հոգևորականությունը դաշնակցականների ղեկավարությամբ միասնական ճակատով են հանդես գալիս։ ... Տեղ-տեղ այդ բլրկը որոշ հաջողություն է ձեռք բերել (Դարալագյազ)՝ օգտագործելով շքավոր ու միջակ գյուղացիության խավարամտությունը և կրոնականությունը»<sup>7</sup>։

Քաղաքական ծրագրերի իրացմանը լծվել էր տերություն ողջ ներուժը, այդ թվում՝ Միացյալ գլխավոր քաղաքական վարչությունը (ՄԳՔՎ), որը,

<sup>3</sup> ՀՀԲԿԳՊԱ, ֆ. 1, ց. 9, գ. 192, թ. 75։

<sup>4</sup> Նույն տեղում, ֆ. 1, ց. 5, գ. 26, թ. 16։

<sup>5</sup> ՄԱԴ, գ. 25, թ. 1—3։

<sup>6</sup> Հայ ժողովրդի պատմություն, հ. 7, Երևան, 1967, էջ 297—298։

<sup>7</sup> ՀՀԲԿԳՊԱ, ֆ. 1, ց. 9, գ. 18, թ. 44։

բացի ընդհանուր գիծը պահելուց, իր հատուկ միջոցներով կատարում էր պետական պատվերը: Վերջինս ուղղված էր նաև հոգևորականության դեմ: Այսպես, 1930 թ. մարտին այդ գերատեսչությունը շրջաբերական է հղում իր բոլոր տեղական մարմիններին, որտեղ տրվում են այն խնդիրները, որ պետք է լուծվեին իրենց կողմից մոտակա տարիներին եկեղեցու դեմ տարվող աշխատանքներում: Հիշատակված անշափ ուշագրավ փաստաթղթերից զգացվում է, թե ինչպիսի զգուշությամբ էին վերաբերվում իշխանությունները ժողովրդական լայն զանգվածներում, հատկապես գյուղական շրջաններում մեծ հեղինակություն վայելող եկեղեցուն: Այնտեղ կարողում ենք. «Մեր վերաբերմունքը եկեղեցականների նոր մարտավարության նկատմամբ սահմանելիս, մենք ըստիպված էինք հաշվի առնելու այն, որ գյուղական բնակչության ճնշող մեծամասնությունը և անգամ աղքատների մի մասը վարակված են կրոնական նախապաշարմունքներով: Բացի այդ, եկեղեցին գյուղում ուներ ամուր ծիսական-կենցաղային արմատներ:

Բնականաբար, մենք չէինք կարող այդ պայմաններում լիվիդացնել եկեղեցին, ուր մտնում է բազմամիլիոնանոց գյուղացիությունը»<sup>8</sup>:

Հայաստանում ստալինյան բռնությունների առաջին մեծ ալիքը սկսվեց 1930 թ. և սկզբնական շրջանում ներառեց այն գյուղական վայրերը, որտեղ անց էին կացնում զանգվածային կոլեկտիվացումը: Համատարած բռնությունների դեմ առաջացել էր դիմադրություն, որին մասնակցում էին նաև որոշ հոգևորականներ: Այսպես, 1930 թ. գործող բանդիտական խմբերին աջակցում էր Դարալազյազի Խաչիկ գյուղի քահանա Տեր Արիստակես Խաչատրյանը<sup>9</sup>, 1931 թ. Ղուրդուղուլիի (Արմավիր) շրջանում կատարած միջոցառումների ժամանակ ԳՔՎ մարմինների աշխատակիցները ձերբակալում են բանդիտական խմբի մեջ գործող քահանա Տեր Դավիթ Ավագյանին (Մանուկ Մանուկյանին)<sup>10</sup>: Թալինի շրջանում գործող նման խմբի մեջ ձերբակալվում է նաև Ղրմզուլ գյուղի քահանա Տեր Արսեն (Տեր Հայկ) Տեր-Կարապետյանը<sup>11</sup> և այլն:

1930—1931 թթ. ծավալված բռնությունները գյուղում ծանր կացության առաջ էին կանգնեցրել հոգևորականներին: Այդ առումով շատ բնորոշ է Շիրակի հայ առաքելական եկեղեցու թեմի առաջնորդ, 1937-ին բռնադատված Արտակ եպ. Սմբատյանի՝ 1930-ին կաթողիկոսին հասցեագրված նամակը, որտեղ նա գրում էր. «Նախ թեմիս գլխավորապես դաշտային մասերի գյուղերը կոլեկտիվացման են ենթարկված, հետզհետե մյուս գյուղերը ևս կոլեկտիվացում կընդգրկի: Քահանան մնալու է միանգամայն դուրսը: Շուտով բոլոր եկեղեցիներից պիտի ձեռք քաշել: ... Քանի-քանի քահանաներ եկել և դարձյալ գալիս են աղի արցունք թափում մոտս իրենց զավակների համար, որոնք շուտով քաղցի պիտի մատնվեն...»<sup>12</sup>: Զնայած 1934—35 թթ. մի փոքր թուլանում է բռնությունների ալիքը, սակայն հոգևորականության վիճակը մնում է դառն ու անմխիթար: Ահա, թե 1935 թ. գարնանը Բաշ-Գառնիի Զավեն քահանան ինչ էր գրում կաթողիկոսին. «Բացի նախկին անգամայ կալանաւորելս վերստին 1933 թվի օգոստոսից մինչև 1935 թվի փետրվարի 1-ին, ամբողջ տարի ու կէս բանտարկելէս վերջ, ահա հազիւ թէ ազատվեցա, տունս գնացի, բոլորովին մերկ, քաղցած վիճակի մէջ գտայ ընտանիքիս:

<sup>8</sup> ՀՀ ՆԳ և ԱԱՆ արխիվ, պատմական ֆոնդ, գ. 278, էջ 2:

<sup>9</sup> Նույն տեղում, ԿԳՑ (կարճված գործերի ֆոնդ), գ. 10127, թ. 36:

<sup>10</sup> Նույն տեղում, գ. 11951, թ. 85:

<sup>11</sup> Նույն տեղում, գ. 10284, թ. 19:

<sup>12</sup> ՀՀԳՊԿԱ, ֆ. 409, ց. 1, գ. 1467, թ. 10:

... Ամէն ինչս գրաւած է, հողից զրկած եմ, քահանայագործութիւնն դադարած է...»<sup>13</sup>:

Ինչպէս նշվեց, մինչև 1930 թ. փակվել և լուծարվել են բազմաթիվ եկեղեցիներ, և դա շարունակվում էր հաջորդ տարիներին: Այսպես, 1930 թ. լուծարում են Սեանի և Սանահինի վանքերը, 1931 թ. բռնագրավում են Դաբալագյազի հաշիկ գյուղի եկեղեցին, 1932 թ. գրավում են Լենինականի եկեղեցիները, 1933 թ. փակվում և հնագիտական արգելոց է հայտարարվում Գեղարդի վանքը, հնագիտական փակ վայր է հայտարարվում Այրիվանքը և այլն<sup>14</sup>:

Ընդհանուր բռնութիւնների պատկերի վրա խիստ կարևորվում է հայ առաքելական եկեղեցու դիրքորոշումը: Հենց այդ տարիներին համընկավ երջանկահիշատակ Գևորգ Ծ կաթողիկոսի մահը (1930 թ. մայիսի 8): Փաստորեն, նրա մահից հետո հայ լուսավորչական եկեղեցու ղեկը ստանձնեց կաթողիկոսի տեղակալ Խորեն արք. Մուրադբեկյանը, որը 1932 թ. ընտրվեց կաթողիկոս և մինչև իր առեղծվածային մահը՝ 1938 թ. ապրիլի 5-ը, պատվով կատարեց հայրենանվեր առաքելութունը<sup>15</sup>:

Պատահական չէ, որ սեպտեմբերի 7-ին Անդրերկրկոմից Հայաստան է ուղարկվում Անդրպետքաղվարչության կազմած այդ գերատեսչության պետ Լ. Բերիայի ու գաղտնի բաժնի պետ Խ. Մուղղուսու կողմից ստորագրված փաստաթուղթը՝ «Ձեկուցագիր հայ հոգևորականության վերաբերյալ», որտեղ նշված էր. «Ներկայումս եկեղեցու ղեկավարի կաթողիկոս Գևորգ Ծ-ի մահվան առթիվ, հայ հոգևորականության հարցը ձեռք է բերում էլ ավելի լուրջ նշանակություն՝ ելնելով հայ եկեղեցու նոր համագումար հրավիրելու համաշխարհային քաղաքական կարևորությունից»<sup>16</sup>:

1930 թ. վերջին ՀԿ(Բ)Կ ԿԿ առաջին քարտուղար Ա. Խանջյանը, այդ տարիների համար բնորոշ ոճով զեկուցում է ուղարկում ՀամԿ(Բ)Կ ԿԿ-ին և Անդրերկրկոմին, որտեղ առաջարկում է «Թույլ տալ հայոց ազգային եկեղեցական ժողովի հրավիրումը էջմիածնում կաթողիկոսի ընտրությունների համար...»<sup>17</sup>: Դա վկայում էր այն մասին, որ Հայաստանի ղեկավարությունը հակված էր անցկացնելու կաթողիկոսի ընտրությունները և, փաստորեն, իր ոչ երկրորդական դերն է ունենում հայ ժողովրդի համար շատ կարևոր այդ հարցում:

Հայաստանի իշխանությունների և հայ լուսավորչական եկեղեցու մեջ ստեղծված հարաբերությունների մասին են ասում նաև այն նամակագրություններն ու հանդիպումները, որոնք տեղի էին ունենում էջմիածնի և Հայաստանի պետական մարմինների, այդ թվում՝ ԳՔՎ ներկայացուցիչների մեջ<sup>18</sup>:

Երբեմն իշխանություններն ընդառաջում էին էջմիածնի խնդրանքներին և բաց թողնում որոշ բանտարկված հոգևորականների: Այսպես, օրինակ, 1930 թ. կաթողիկոսի խնդրանքով ազատ են արձակվում Սղիշե վարդապետը և Արիստակես եպիսկոպոսը<sup>19</sup>: Կամ համեմատաբար մեղմ վերաբերմունք են

<sup>13</sup> ՄԱԳ, գ. 28, թ. 30:

<sup>14</sup> Տե՛ս 22904Ա, ֆ. 409, ց. 1, գ. 2413, 1502, 1517, 649, 2493:

<sup>15</sup> Մանրամասն տե՛ս «Ազգ» օրաթերթ, 20 նոյեմբերի 1996 թ.:

<sup>16</sup> 222ՔՓԿՊԱ, ֆ. 1, ց. 10, գ. 45, թ. 57:

<sup>17</sup> 222ՔՓԿՊԱ, ֆ. 1, ց. 10, գ. 45, թ. 72:

<sup>18</sup> Տե՛ս «Վավերագրեր Հայ եկեղեցու պատմության» (1921—1938 թթ.), կազմ. Ս. Բեհրուդյանը, Երևան, 1994 թ. և «Վավերագրեր Հայ եկեղեցու պատմության», գ. Բ, Երևան, 1996 թ.:

<sup>19</sup> ՄԱԳ, գ. 35, թ. 14:

ցույց տալիս էջմիածնին, շնայած այն բանին, որ իրենց պահանջով էջմիածինը չէր ազատում Ատրպատականի (Իրան) թեմի առաջնորդ Ներսես արքեպիսկոպոս Մելիք-Քանգյանին և այլն<sup>20</sup>:

1930—36 թթ. բռնությունները ներառում են նաև այլ եկեղեցիների ներկայացուցիչներին: Նշված ժամանակաշրջանում բռնադատված 116 հոգևորականներից 111-ը ներկայացնում էին հայ առաքելական եկեղեցին, 4-ը՝ հայ կաթոլիկ և 1-ը՝ հայ ավետարանական եկեղեցիները: Հալածված հայ առաքելական եկեղեցու հոգևորականներից 2-ը՝ Եղիշե Շահումյանը և Տեր Նիկողոս Զոհրաբյանը վարդապետներ էին: էջմիածնի վանքի վարդապետ Եղիշե Շահումյանը 1931 թ. հունիսին մեղադրվում է այն բանում, որ, իբրև թե, կապ է պաշտպանել Երևանում գործող ընդհատակյա դաշնակցական կազմակերպության հետ և սուրհանդակի դեր կատարել նրանց ու կաթողիկոսի միջև: Նա դատապարտվում է 3 տարվա ազատազրկման՝ 2 տարի փորձնական ժամկետով: Արդարացվել է 1989 թ.<sup>21</sup>, Իսկ 1935 թ. ձերբակալված 75-ամյա վարդապետ Տեր Նիկողոս Զոհրաբյանը ազատվում է կալանքից իր պատկառելի տարիքի շնորհիվ<sup>22</sup>:

Հայ կաթոլիկ եկեղեցու հոգևորականներից բռնադատվեցին Արթիկի շրջանից Տեր Ալեքսան Լակոբյանը, Լենինականից Տեր Պետրոս Դավթյանը, Ստեփանավանից Տեր Հակոբ Անտոնյանը և Թալինից Տեր Բարսեղ Մինասյանը<sup>23</sup>, ինչպես նաև հայ ավետարանական Տրդաթ (Քաթոս) Մանուկյանը, էջմիածնի շրջանի Սապագար գյուղից<sup>24</sup>:

1930-ականի առաջին կեսին ձերբակալված և հիմնականում տարբեր ժամկետներով աքաղաղված քահանաներին մեղադրում էին դաշնակցական ընդհատակյա գործունեության, հակահեղափոխական, հակախորհրդային աշխատանք տանելու մեջ: Բանդիտական գործունեության մեջ մեղադրվեցին և զբնդակահարվեցին 3 հոգևորական<sup>25</sup>: Ամենատարածված պատժաչափերն այդ թվերին 5 տարին էր, որը տրվել է 29 հոգևորականի, 3 տարի՝ 22-ին, 2 տարի՝ 16-ին, 1 և 1,5 տարի՝ 12-ին: Չորս հոգևորականներ դատապարտվեցին 10 տարվա ազատազրկման: Աշխարհագրական առումով 1930—36 թթ. բռնությունները հոգևորականների նկատմամբ հետևյալ պատկերն ունեին՝ էջմիածնի շրջան՝ 17 մարդ, Մարտունի՝ 16, Լենինական՝ 10, Ախտա՝ 10, Աշտարակ՝ 7, Երևան, Կոտայք, Արթիկ՝ 6-ական, Նոր-Բայազետ՝ 5, Արմավիր, Ապարան, Բասարգեշար, Թալին՝ 4-ական, Դարլազյազ, Ստեփանավան, Միկոյան, Վեդի՝ 3-ական մարդ և այլն: Ինչպես նկատելի է՝ Հայաստանի հոգևորականությունը և հատկապես նրա ամենակտիվ և կարևոր նշանակություն ունեցող մասը՝ քահանայությունը, զգալի հարված է ստացել:

1930-ից համատարած կոլեկտիվացման տարիներին սկսված բռնությունների ալիքը գագաթնակետին հասավ 1937—38 թթ., երբ կոտորվում էր ազգի ընտրանին, իսկ բռնադատված մարդկանց թիվը այդ տարիներին Հայաստանում հասավ 8104-ի, որոնցից 4530-ը գնդակահարվեցին:

Ձանգվածային բռնությունների հերթական բռնկման ահազանգը դարձավ 1936 թ. հուլիսի 9-ին Ա. Խանջյանի սպանությունը, որ իշխանությունների

<sup>20</sup> Մանրամասն տե՛ս Երան-Նամեք, 1996 թ., համ. 22:

<sup>21</sup> ՀՀ ՆԳ և ԱԱՆ արխիվ, ԿԳՖ, գ. 9154, թ. 26, թ. 37, 38:

<sup>22</sup> Նույն տեղում, գ. 3183, թ. 28:

<sup>23</sup> Նույն տեղում, գգ. 11727, 12084, 1362, 12776:

<sup>24</sup> Նույն տեղում, գ. 4291:

<sup>25</sup> Այս և մյուս թվական ընդհանրացումները հեղինակին են, որը կատարվել է ՀՀ ՆԳ և ԱԱՆ արխիվի ԿԳՖ-ի ուսումնասիրության հիման վրա:

կողմից հայտարարվեց որպես «ինքնասպանութեան ակտ»<sup>26</sup>; Մինչև օրս վերջնականապես պարզված չեն Ա. Խանջյանի մահվան հանգամանքները, սակայն 1956 թ. ԽՍՀՄ դատախազութեան, մասնավորապես գնդապետ Վիտիևսկու կողմից կատարված խիստ գործիմաց հետաքննութեան արդյունքները գրեթե կասկած չեն թողնում, որ նա սպանվել է ՀամԿ(Բ)Կ Անդրերկրկոմի ղեկավար Լ. Բերիայի աշխատասենյակում<sup>27</sup>; Ա. Խանջյանի թաղման օրը տեղի ունեցավ Հայաստանի կուսակցի ժողովը, որի մասնակիցները միաձայն դատապարտեցին «ազգայնամոլ» Ա. Խանջյանին:

Սակայն դա չօգնեց ժողովի մասնակից 106 ղեկավար աշխատակիցներից 71-ին, այդ թվում և Խանջյանին փոխարինած Ամատունուն, ՀԿ(Բ)Կ բյուրոյի, ԿԿ-ի անդամներին և թեկնածուներին, որոնք ենթարկվեցին բռնութունների: Ակամա զուգահեռ կարելի է անցկացնել 1934 թ. ՀամԿ(Բ)Կ 17-րդ համագումարի մասնակիցների մեծամասնութեան ճակատագրերի հետ, որոնք դրա հաջորդած տարիներին զոհ դարձան ստալինյան բռնութուններին:

Բնական է, որ համընդհանուր բնույթ ձեռք բերած այդ բռնութունները չէին կարող շրջանցել իր ազգապահպան ավանդույթներով հայտնի Հայ առաքելական եկեղեցին:

Եթե 1930—36 թթ. բռնութունների էին ենթարկվել եկեղեցին ներկայացնող 110 հոգևորականներ, որոնցից 68-ը՝ 1930—31 թթ. համատարածի տարիներին, ապա 1937—38 թթ. բռնութունների ենթարկվեցին 90-ը: Համեմատության համար նշենք, որ 1930—36 թթ. գնդակահարվել է 3, իսկ արդեն 1937—38 թթ.՝ 64 հոգևորական:

Հայաստանի կոմկուսի նոր ղեկավարութունը առաջնահերթ խնդիր է համարում կրոնի դեմ պայքարը, և արդեն 1936 թ. հուլիսի 23-ին ՀԿ(Բ)Կ ԿԿ բյուրոն որոշում է կայացնում «Աշտարակի և այլ շրջանների կրոնական տրամադրութունների մասին», որտեղ խիստ հրահանգներ տրվեցին հակակրոնական աշխատանքներն ուժեղացնելու ուղղությամբ<sup>28</sup>: Այդ ղեկավար ցուցումները կատարելու համար հանրապետության բոլոր պետական և հասարակական մարմինները ձեռնամուխ եղան եկեղեցին վերջնականապես ջախջախելու գործին: Երկրի քաղաքական մթնոլորտի կտրուկ բռնացումն իր ազդեցութունն ունեցավ հանրապետութունում իշխանութուններ-եկեղեցի հարաբերութունների վրա, և, փաստորեն, անելանելի վիճակում հայտնված Ամենայն Հայոց կաթողիկոս Խորեն Ա Մուրադբեկյանի ճիգերը՝ ազդելու ընդհանուր իրադրության վրա, օգնելու դժոխային վիճակում գտնվող հոգևորականներին, ապարդյուն էին:

ՀՀ Ազգային անվտանգության արխիվի՝ բազմաթիվ հոգևորականների գործերի նյութերից կարելի է անել միանշանակ եզրակացութուն, որ ինքը՝ կաթողիկոսն էլ գտնվում էր պատժիչ մարմինների հսկողության տակ, և եկեղեցականների քննութունների ժամանակ բացահայտ փորձ էր արվում վարկարեկիչ տվյալներ հավաքել նրա մասին: Դա է վկայում նաև Խորեն Ա-ի եղբոր՝ Առն Մուրադբեկյանի ձերբակալության և գնդակահարության փաստերը<sup>29</sup>: Կա նաև հիշատակութուն այն մասին, որ նույն ճակատագրին է արժանացել կաթողիկոսի մյուս եղբայրը՝ Մարգարայի մաքսատան աշխատակից Սերգեյ Մուրադբեկյանը<sup>30</sup>, ինչը հաստատող նյութեր ուսումնասիրված ար-

<sup>26</sup> ՏՆ՝ս 22 ՆԳ և ԱԱՆ արխիվ, պատմական ֆոնդ, գ. 186:

<sup>27</sup> Նույն տեղում, ԿԳՑ, գ. 8997, հ. 4, թ. 27—35:

<sup>28</sup> ՀՀԶՔՓԿՊԱ, ֆ. 1, ց. 16, գ. 42, թ. 64:

<sup>29</sup> ՀՀ ՆԳ և ԱԱՆ արխիվ, ԿԳՑ, գ. 6484, թ. 13:

<sup>30</sup> Ստ. Ստեփանյանց, «Հայ առաքելական եկեղեցին ստալինյան բռնապետության օրոք», Ապրիլ, Եր., 1994, էջ 117:

խիվում շեն գտնվել: Կարծիքներ են հայտնվում նաև այն մասին, որ Խորեն Ա կաթողիկոսը 1938 թ. զոհ է դարձել իշխանությունների կողմից կազմակերպած ահաբեկչությանը<sup>31</sup>: Նշվում են անգամ կոնկրետ կատարողների անուններ, սակայն դրանք հաստատող փաստեր չկան: Ավելին, այն հղումը, թե այդ մասին պատմել է կաթողիկոսի խոհարար Կլեբչյանը, խիստ կասկածելի է, քանի որ վերջինս 1938 թ. մարտի 29-ին, այսինքն կաթողիկոսի մահից մեկ շաբաթ առաջ, ձերբակալված էր և գտնվում էր կալանավայրում<sup>32</sup>:

1937—38 թթ. բռնությունները ավելի շատ էին ընդգրկում հայ ազգի ընտրանին, այդ թվում և Հայ առաքելական եկեղեցու ճանաչված, բարձրաստիճան հոգևորականներին: Եթե 1930—36 թթ. հիմնականում բռնությունների էին ենթարկվում գյուղական վայրերում բնակվող քահանաները, ապա 1937—38-ին արդեն ձերբակալվում են 1 արքեպիսկոպոս, 3 եպիսկոպոս և 3 վարդապետ:

1937 թ. մայիսի 9-ին Խորեն Ա կաթողիկոսը նամակ է հղում ՀեՍՀ ՆԳԺԿ կոմիսար Խ. Մուղղուսուն հետևյալ բովանդակությամբ. «Տարվույս ապրիլի 14-ի առավոտյան տեղեկացանք, որ 13-ի գիշերը ազատազրկման են ենթարկվել Ս. Տ. Արտակ և Իսահակ եպիսկոպոսները: Այս փաստը մեծ ցավ պատճառեց մեզ, քանի որ դեռ ամիսներ առաջ նույն վիճակին ենթարկվեցին Մայր Աթոռի երկու այլ միաբաններ՝ Ս. Արիստակես և Թադեոս եպիսկոպոսները, որոնցից վերջինը ցարդ գտնվում է կալանքի տակ:

Մայր Աթոռ Ս. էջմիածինը, որ այսօր Խորհրդային Միության մեջ ունի միայն 19 միաբան, նրանցից 4-ի՝ հանդեպ մեր Հայրենիքը և հարազուտ կառավարութունը մեղանշած հայտարարելը համազոր է անվստահություն հանդեպ ս. էջմիածնի»<sup>33</sup>: Կաթողիկոսը խնդրում է ազատ արձակել եպիսկոպոսներին: Սակայն բռնության մեքենան այլևս հնարավոր չէր կանգնեցնել, և բարձրաստիճան հոգևորականները դատապարտված էին ձերբակալման պահից: Այլ բան չէր կարելի ակնկալել այդ տարիների Հայաստանի իշխանավորներից, որոնց ղեկավարը՝ Ամատունին, 1937 թ. մայիսին ՀԿ(Բ)Կ 10-րդ համագումարում ասում էր, թե «Հարկավոր է վերջ դնել հակակրոնական աշխատանքի թերազնահատմանը: ... Մենք չպետք է մոռանանք, որ մեր երկրում գոյություն ունի էջմիածինը, որը սոսկ իր գոյության փաստով մեծ շահով նպաստում է կրոնական աշխատանքների աշխուժացմանը...»<sup>34</sup>:

Կաթողիկոսի խնդրանքը եպիսկոպոսների ազատման մասին մնաց անպատասխան: Արտակ Սմբատյանը ՀեՍՀ ՆԳԺԿ-ի եռյակի որոշմամբ գնդակահարվեց, իսկ Իսահակ եպ. Տեր-Միքայելյանը աքսորվեց և մահացավ աքսորավայրում: Վերջինիս մասին վկայում է նրա հետ աքսորված քահանա Ղևոնդ Տեր-Ջաքարյանը, որը 1938 թ. գարնանը գրում է կաթողիկոսին. «... մարտ ամսի մեկին, գիշերվա ժամը ութին վախճանվեցավ Սահակ սրբազան՝ Տեր-Միքայելյանը և թաղեցինք մարտի 2-ին ժամը մեկին երկու քահանայով և երկու սահնակով...»<sup>35</sup>:

Անհրաժեշտ ենք համարում կանգ առնել այն կարևոր երևույթի վրա, որ շնայած ստեղծված անտանելի վիճակին, կաթողիկոսը և Հայ առաքելական եկեղեցու առաջնորդները ոչ միայն բարոյապես, այլև փորձում էին նյութա-

<sup>31</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 120—122 և «Վավերագրեր Հայ եկեղեցու պատմության», գ. Բ, էջ 574—581:

<sup>32</sup> ՀՀ ՆԳ և ԱԱՆ արխիվ, ԿԳՑ, գ. 8365, թ. 2:

<sup>33</sup> ՄԱԳ, գ. 35, թ. 14:

<sup>34</sup> «Խորհրդային Հայաստան», 10 հունիսի 1937 թ.:

<sup>35</sup> ՀՀԳԳԱ, ֆ. 409, ց. 1, գ. 237, թ. 1:

պես սատար կանգնել դժբախտության մեջ հայտնված մարդկանց: Ընդ որում, օգնում էին թե՛ հոգևորականներին, թե՛ քաղաքացիական անձերին՝ գիտակցաբար վտանգելով իրենց ապահովությունը:

Խորեն Ա կաթողիկոսը և Գերագույն հոգևոր խորհրդի որոշ անդամներ պարբերաբար օժանդակում էին «ժողովրդի թշնամի» հայտարարվածներին և նրանց ընտանիքի անդամներին: Դա չէր վրիպել ՆԳԺԿ-ի աչքից, և այդ առումով շատ հատկանշական է Արտակ եպ. Սմբատյանի գործը, որը ձեռքակալվել է 1937 թ. ապրիլին: Նա իր ժամանակի ուսյալ և հարգված հոգևորականներից էր, Գերագույն հոգևոր խորհրդի անդամ, կաթողիկոսի ներկայացուցիչը Երևանում, կատարում էր կաթողիկոսի հաշվապահի պաշտոնը՝ վայելելով վերջինիս առանձնակի վստահությունը: Ինքն իր կողմից մեծ նվիրվածություն էր ցուցաբերում դեպի Վեհափառը:

Գտնվելով բանտում, հայտնի կամայական միջոցներով հարցաքննվելով, «խոստովանելով» իր որոշ «մեղքերը»՝ Արտակ եպիսկոպոսը ոչ մի ձևով չի «խոստովանում» քննչական մարմինների առաջարկած մեղադրանքները կաթողիկոսի հասցեին: Արտակ եպիսկոպոսի առաջին հարցաքննությունների հիմնական ուղղվածությունն այն էր, որ վերոհիշյալ մարմինների ներկայացուցիչները ձգտում էին նրանից իմանալ, թե քանի «հակախորհրդային» հայտարարված մարդու են նյութապես օժանդակել, ընդ որում, ձգտում էին ամեն կերպ պատասխան կորզել, որ նա այդ գործունեության մեջ առաջնորդվել է Վեհափառի ցուցումներով: Այսպես, 1937 թ. ապրիլի 20-ի հարցաքննության ժամանակ տրվում է հետևյալ հարցը. «Դուք նորից ոչ լրիվ և ոչ ճիշտ ցուցմունքներ եք տալիս: Քննությանը հայտնի են հաստատ փաստեր, որ դուք ֆինանսական օգնություն եք ցույց տվել և այլ ձեռքակալվածներին», որին նա պատասխանում է՝ «ֆինանսական և տնտեսական օգնություն է ցույց տրվել ձեռքակալված Քաղե Հարությունյանին: ... Այդ փողերը ուղարկվել են նրա հասանելիք աշխատավարձից»<sup>36</sup>: Մեկ այլ հարցաքննության ժամանակ նա հայտնում է, որ օգնել է կալանավորված քահանա Տեր-Կարապետյանի կնոջը, երեցփոխ Խաչատուր Մալաշյանի կնոջը, ինչպես նաև քաղաքացիներ Կոստանտին Գյուլնազարյանին, Ծղիշե Մանուչարյանին և ուրիշներին:

Քննիչներին հետաքրքրում էին նաև կաթողիկոսի կապերը արտասահմանի հետ և հարցադրումների հիմնական «հերոսը» Ատրպատականի (Իրան) թեմի առաջնորդ Ներսես արք. Մելիք-Քանգյանն ու դաշնակցականներն էին: Չէին մոռացել արտասահմանի հայտնի մտավորական և քաղաքական գործիչ Արշակ Զոպանյանին, որի հետ կապը որակավորվում էր որպես լրտեսության անժխտելի ապացույց:

Ժամանակի ոգին ըմբռնելու համար մի հատված ներկայացնենք Արտակ եպիսկոպոսի մեղադրական եզրակացությունից. «Քարոզների միջոցով պարբերաբար վարում էր հակախորհրդային ազգայնական ագիտացիա, եկեղեցիներում կազմակերպում էր միջոցների հավաքում և նյութական օգնություն էր ցույց տալիս քաղաքսորյալ Կոստանտին Գյուլնազարյանին, քաղբանտարկյալներ Ծղիշե Մանուչարյանին և ուրիշների ու նրանց ընտանիքներին... զաղտնի նամակագրական կապ էր պահպանում դաշնակ-եպիսկոպոս Մելիք-Քանգյանի հետ թավրիզում...»<sup>37</sup>: Նշենք, որ 1955 թ. նոյեմբերի 5-ին ՀԽՍՀ Գերագույն դատարանի որոշմամբ Արտակ եպիսկոպոսը արդարացվեց «հանցակազմի բացակայության պատճառով»<sup>38</sup>:

<sup>36</sup> 22 ՆԳ և ԱԱՆ արխիվ, ԿԳՑ, գ. 422, թ. 25—26:

<sup>37</sup> Նույն տեղում, թ. 49:

<sup>38</sup> Նույն տեղում; թ. 73:



Հայաստանում ստալինյան բնությունների ուժեղացման առաջին ալիքի մեջ ընկավ Եպիսկոպոս Թադևոս (Թադե) Հարությունյանը, որը ձերբակալվել է 1936 թ. օգոստոսին: Նա դեռ 1909 թ. ձերբակալվել էր ցարական իշխանությունների կողմից ժանդարմ-ռոտմիստր Մելիք-Շահնազարովի ահաբեկչությանը մասնակցելու կասկածանքով, ապա՝ 1921 թվին խորհրդային իշխանությունների կողմից, անօրինական զենք կրելու համար և երկու դեպքում էլ ազատ էր արձակվել: Նման կենսագրություն ունեցող, բնավորությամբ աշխույժ և գործունյա հոգևորականը չէր կարող վրիպել ամենատես Գլխավոր քաղվարչության ուշադրությունից: Բազմաթիվ հարցաքննություններից հետո՝ 1937 թ. նոյեմբերին, կազմվում է Թադե Եպիսկոպոսի մեղադրական եզրակացությունը, որտեղ, մասնավորապես, գրված էր. «Եպիսկոպոս Տեր Թադևոս Մարտիրոսի Հարությունյանը ուսանողության տարիներին ք. Երևանում եղել է երիտասարդական դաշ. (դաշնակցական— Ա. Մ.) միության մեջ: ... Իր էջմիածնի վանքում գտնվելու ժամանակ, երկար տարիներ կապեր էր պաշտպանում նախկին դաշնակների, Տ/Տ (հակահեղափոխական— Ա. Մ.) տարրերի հետ և պարբերաբար թունդ հակախորհրդային, ազգայնամոլական ագիտացիա էր վարում Վաղարշապատ քաղ. հավատացյալ և անհավատ քաղաքացիների մեջ այն մասին, որ Հայաստանի սահմանները խիստ նեղացված են, էջմիածնի եկեղեցին և հավատը հետապնդվում են խորհրդային իշխանության կողմից... Պրովակացիա էր տարածում այն մասին, որ Խանջյանին (ՀԿ(Բ)Կ ԿԿ նախկին քարտուղար) սպանել են վրացիները, պնդում էր, որ Ստալինյան սահմանադրությունը ձևական է...»<sup>39</sup> և այլն:

Ուշագրավ է այն, որ շնայած հայտնի պայմաններին, Թադևոս Եպիսկոպոսը այդպես էլ չի ընդունել և ոչ մի պարտադրվող մեղադրանք: Սակայն դա չփրկեց նրան և 1937-ին գնդակահարվեց:

Եպիսկոպոս Իսահակ Տեր-Միքայելյանը ձերբակալվել է էջմիածնի շրջանի «հակախորհրդային տրամադրված» խմբի 5 այլ անդամների հետ, որոնց մեջ էր նաև քահանա Տեր Ղևոնդ Տեր-Չաքարյանը: Ըստ նրա մեղադրական եզրակացության՝ Եպիսկոպոսը կապված է եղել «հակահեղափոխական կազմակերպության ղեկավար Գևորգ Դովլաթյանի հետ, կիսել նրա հակահեղափոխական հայացքները, կողմնակից է եղել Ճապոնիայի և Գերմանիայի զավթողական քաղաքականությանը ԽՍՀՄ-ի դեմ և դաշնակցական իշխանության վերականգնմանը խորհրդային Հայաստանում»<sup>40</sup>: 1907 թ. ցարական իշխանությունների կողմից հայտնի արքեպիսկոպոս Մելիք-Թանգյանի հետ աքսորված Իսահակ Եպիսկոպոսը աքսորվում է նաև խորհրդային իշխանությունների կողմից՝ իր մահկանացուն կնքելով աքսորավայրում:

1938 թ. ձերբակալվում է Բագրատ արք. Վարդազարյանը, որի գործից ոչ մի կերպ հնարավոր չէ պարզել նրա ձերբակալման օրը: Այսպես, ձերբակալման օրդերում նշված է փետրվար 1938 թ., խուզարկության արձանագրության վրա՝ 8 փետրվարի 1938 թ., ՀԽՍՀ նԳԺԿ ֆինբաժնի անդորրագիրը թվագրված է 2 մարտի 1938 թ., ձերբակալման անկետան՝ 6-ը փետրվարի 1938 թ., առաջին հարցաքննության ամսաթիվը՝ 13 փետրվարի 1938 թ., երկրորդինը՝ 19 փետրվարի 1938 թ., իսկ երրորդինը հանկարծ՝ 1 փետրվարի 1938 թ.<sup>41</sup>: Տվյալ գլուխկոտրուկը լավագույնս վկայում է այն մասին, թե ինչ ձևով էր աշխատում իրավապահպան մեքենան ստալինյան մենատիրության տարիներին և միաժամանակ նախազգուշացնում հետազոտողներին, որ մեծ

<sup>39</sup> Նույն տեղում, 9668, թ. 42:

<sup>40</sup> Նույն տեղում, գ. 58614, հ. 2, թ. 42:

<sup>41</sup> Նույն տեղում, գ. 4656, թ. թ. 10, 12, 14, 15, 18, 21:

վերապահությամբ մոտենան թե այս և թե այդ տարիների մյուս գործերում գտնվող փաստերին:

Հոգևոր ճնմարանի և բարձրագույն իրավաբանական կրթություն ստացած 69-ամյա ճանաչված հոգևորականը, անկախ քննություն կոչվող գործողությունների արդյունքներից, դատապարտվել է մահվան, որը ձեռնարկին կազմվեց 1938 թ. փետրվարի 28-ին կայացած ՀԽՍՀ ՆԳԺԿ եռյակի վերջնագրում. «Բագրատ Պողոսի Վարդազարյանին ԳՆԴԱԿԱՀԱՐԵԼ, անձամբ իրեն պատկանող իրերը-բռնագրավել»<sup>42</sup>:

1937 թ. ձերբակալվում և բանտարկվում են նաև վարդապետներ Տեր Հովհաննես Տեր-Հյուսյանը, Դանիել Զաղոյանը և Տիրայր Դալաքյանը: Առաջին երկուսը ծնունդով Արևմտյան Հայաստանից էին: Տեր-Հյուսյանը 1918—26 թթ. լինելով կաթողիկոսի ներկայացուցիչը Մերձավոր Արևելքում, մեծ աշխատանք է կատարել հազարավոր հայերի փրկության գործում՝ կազմակերպելով նրանց տեղափոխությունը Հայաստան և այլ երկրներ<sup>43</sup>: Զաղոյանը դարասկզբին մասնակցել էր հայ ազատագրական շարժմանը՝ գործելով Արամ փաշայի (Մանուկյան) և խմբապետ Իշխանի հետ: Նա «Ախթամար» վանքի վարդապետն էր, իսկ Հայաստան էր եկել Իսպահանից՝ եպիսկոպոս Մելիք-Քանգյանի միջնորդությամբ, իտրեն արք. Մուրադբեկյանի մոտ: Նրա հարցաքննությունների ժամանակ քաղվարչությանը հետաքրքրող հիմնական հարցերն էին, թե «... ի՞նչ հանձնարարություն էր Ձեզ տվել խորհրդային իշխանության բացահայտ թշնամի, դաշնակ-եպիսկոպոս Ն. Մելիք-Քանգյանը Ձեր խորհրդային Հայաստան մեկնելուց առաջ»<sup>44</sup>, կամ, թե «ի՞նչ է Ձեզ հայտնի կաթողիկոսի և միաբանության մյուս անդամների ազգայնամոլական հ/հ տրամադրությունների մասին»<sup>45</sup> և այլն:

Այդ բնույթի հարցերն ավելի համառություններ տրվում կաթողիկոսի օգնական, ծնունդով Թբիլիսիից վարդապետ Տիրայր Դալաքյանի հարցաքննությունների ժամանակ:

Այսպես, օրինակ, քննիչը պնդում էր. «Դուք ճիշտ շեք ասում: Մեր տղվա լինելով՝ իտրենի հանձնարարությամբ Դուք ամեն տեղ վարում էիք ակտիվ կրոնական և հակախորհրդային աշխատանք»<sup>46</sup>: Եռյակի որոշումը այս անգամ էլ նույնն էր՝ զնդակահարություն:

Բնականաբար, 1937—38 թթ. բնությունները ամենաէական հարվածը տվեցին կրոնական սպասավորների մեծամասնություն կազմող քահանայությունը, որոնցից 79-ը դարձան դրանց զոհերը, ինչպես նաև՝ 2 սարկավազ և 1 արեղա:

Բռնարարքների ենթարկված հոգևորականների մեծամասնությանը վերագրվող մեղադրանքները խիստ նման էին իրար: Բացի ընդհանուր՝ հակահեղափոխական, հակախորհրդային և ազգայնամոլական գործունեությունից, նշվում էր նաև նախկին տարիներին դաշնակցական լինելը կամ խորհրդային իշխանությունների օրերին «ընդհատակյա դաշնակցական գործունեություն» վարելը, որոնց համար հիմք են ծառայում մինչև 1937 թ. ՄԳՔՎ մարմինների հայտնի իրական կամ հորինված փաստերը:

Նշենք նաև, որ աշխարհագրական առումով հիշյալ տարիներին հատկապես տուժեցի՞ն Լենինականի, էջմիածնի, Երևանի, Մարտունու, Ախտալի, Աշ-

<sup>42</sup> Նույն տեղում, թ. 26:

<sup>43</sup> Նույն տեղում, գ. 2375, թ. 19:

<sup>44</sup> Նույն տեղում, գ. 9703, թ. 4:

<sup>45</sup> Նույն տեղում, թ. 16—18:

<sup>46</sup> Նույն տեղում, գ. 9670, թ. 14:

տարակի, Կոտայքի և Արթիկի շրջանների հոգևորականները, որոնցից ձերբակալվեցին մեծ թվով մարդիկ: Այդ առումով առանձնանում են Լենինականը, որտեղից բռնադատվեց 24, Երևանը՝ 15, Էջմիածինը՝ 11 և Մարտունին՝ 10 եկեղեցական գործիչ:

Ինչպես նկատելի է, 1937—38 թթ. հետապնդվում էին ճանաչված հոգևոր գործիչները, որոնց թվում էին արքեպիսկոպոս Բագրատ Վարդազարյանը, եպիսկոպոսներ Արտակ Սմբատյանը, Թադե Հարությունյանը, Իսահակ Միքայելյանը, վարդապետներ Տեր-Հյուսյանը, Զադոյանը և Դալաբյանը:

Նրանց և նշված մեծաթիվ քահանաների կորուստը լուրջ դժվարությունների առաջ կանգնեցրեց Հայ առաքելական եկեղեցուն, որի հետևանքները զգացվում են նույնիսկ մեր օրերում, քանի որ ինչ որ շափով կտրվեց դարեդար փոխանցվող ավանդույթների շարքը, զգալիորեն կրճատվեց հոգևորականների թիվը, ինչպես նաև բացասական նշանակություն ունեցավ նրանց պատրաստվածություն վրա:

Այսպիսով 1930—40-ական թվերը առանձահատուկ նշանակություն ունեն Հայ եկեղեցու պատմության համար: Այդ տարիները առանձնանում են երկու շրջանով՝ 1930—36 թթ., երբ համատարած կոլեկտիվացման քաղաքականության ժամանակ սկսվում են հոգևորականների, հատկապես գյուղական վայրերում բնակվող քահանայության զանգվածային հալածանքները, և 1937—38 թթ., երբ համընդհանուր քաղաքական ահաբեկչությանը զոհ են գնում Հայաստանի բնակչության բազմահազար քաղաքացիներ, հատկապես նրա ընտրանին: Այդ ընդհանուր պատկերի վրա ուշադրության է արժանի Հայաստանի իշխանությունների և եկեղեցու հարաբերությունները, որը ևս առանձնանում է մի քանի շրջաններով՝ 1920—30 թթ., 1930—36 թթ. և 1937—40-ական թվեր, երբ նկատելի է առաջին շրջանում հիմնականում եկեղեցական գույքի բռնագրավումը և համեմատաբար լոյալ հարաբերությունը Էջմիածնի հետ: Երկրորդ շրջանում առավել ընդգծված են քահանայության դեմ հալածանքները գյուղական շրջաններում, սակայն պահպանվում են Էջմիածին-իշխանություններ հարաբերությունների լոյալության «պայմանները», իսկ երրորդ շրջանը կարելի է բնութագրել եկեղեցու բացահայտ հալածանքների տարիներ, երբ անխնա ոչնչացվում էր հոգևորականության ընտրանին:

Ամփոփելով 1930—1938-ական թվերի եկեղեցու վիճակի մասին տվյալները՝ արձանագրենք, որ հիշյալ տարիներին բռնությունների են ենթարկվել 160 հոգևորականներ, որոնցից 148-ը հայ առաքելական, 7-ը հայ կաթոլիկ և 5-ը հայ ավետարանական եկեղեցիներն էին ներկայացնում: Նրանց թվում բռնադատվել են 1 արքեպիսկոպոս, 3 եպիսկոպոս, 2 հայ ավետարանական համայնքի ղեկավար, 132 քահանա, 6 սարկավազ և այլն: Հաշվի առնելով, որ բռնությունների ենթարկված մի քանի հոգևորականներ հալածվել են 2 և ավելի անգամներ (2 անգամ՝ 43-ը, 3 անգամ՝ 8-ը, 4 անգամ՝ 1-ը), նրանց ընդհանուր թիվը հասնում է 220-ի: ՀՀ ՆԳ և ԱԱՆ արխիվում այդ հոգևորականները անցնում են 157 գործերով:

Հիշյալ տարիներին զնդակահարության են դատապարտվել 91 հոգևորական, 10 տարի ազատազրկման՝ 15-ը, 5 տարվա ազատազրկման՝ 33-ը, 3 տարվա ազատազրկման՝ 22-ը, 2 տարվա ազատազրկման՝ 15-ը և այլն: Հարկ է նշել, որ բռնադատվածների թվի մեջ են նաև գործերում ազատազրկման ժամկետները չնշված և նախնական կալանքի վերցրած 20 ղեպքերը, քանի որ տվյալ պարագայում ևս տեղի է ունեցել բռնարարք մարդկանց ազատության իրավունքի վրա:

1930-ական թթ. հոգևորականներին բարդվող հիմնական մեղադրանք-

ներն էին՝ ընդհատակյա դաշնակցական կազմակերպություններին մասնակցությունը, նախկինում այդ, շատ քիչ դեպքերում նաև այլ, հայկական ավանդական կուսակցություններին պատկանելը, հակախորհրդային, հակահեղափոխական քարոզչությունը, շատ ավելի քիչ՝ կրոնական քարոզչությունը և ավելի պակաս՝ լրտեսությունը:

Աշխարհագրական առումով եկեղեցու հալածանքներն ընդգրկում էին գրեթե ողջ հանրապետության տարածքը՝ 32 շրջան, որոնցից կարելի է առանձնացնել Լենինականը, որտեղ բռնադատվել են 32 հոգևորական, Մարտունին՝ 26-ը, Էջմիածինը՝ 22-ը, Երևանը՝ 21-ը, Աշտարակը՝ 12-ը, Կոտայքը՝ 12-ը, Արթիկ, Քալին՝ 9-ական և այլն:

Ստալինի մահից հետո ԽՍՀՄ քաղաքական ղեկավարությունը նոր գնահատականներ տվեց ուսումնասիրված ժամանակահատվածի իրադարձություններին, մասնավորապես դատապարտվեց անհատի պաշտամունքը և սկսվեց բռնադատվածների գործերի վերանայման գործընթացը:

1955—60-ական թվերին ԽՍՀՄ և ՀԽՍՀ գերագույն դատարանները արդարացրին 50 հոգևորականների: Հետագա տարիներին նկատվեց այդ գործունեության որոշակի ընդհատում, իսկ 1989 թ. հունվարի 16-ի ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության «30—40-ական թվականներին և 50-ական թվականի սկզբներին ռեպրեսիայի զոհերի նկատմամբ արդարությունը վերականգնելու լրացուցիչ միջոցառումների մասին» հրամանագրի հրապարակումից հետո արդարացվեցին եկեղեցու 88 ներկայացուցիչներ: Այդ մասին նշումներ չկան 15 գործերում:

Հայաստանի երրորդ հանրապետության Գերագույն խորհուրդը ևս անդրադարձավ մեր ժողովրդի համար այդ դժան տարիներին և 1994 թ. հունիսի 14-ին ընդունեց օրենք «Բռնադատվածների մասին», որով նորանկախ պետությունն իր բարոյական վերաբերմունքն արտահայտեց տվյալ երևույթի նկատմամբ:

А. С. МАНУКЯН — Церковь в Армении в 1930-х годах. — После установления советской власти в Армении коренным образом изменились взаимоотношения церкви и властей. С отделением церкви от государства начались откровенные гонения церковников по всей стране, что выражалось в закрытии церквей, конфискации их имущества и т. д. Массовые физические гонения священников начались в конце 20-х.

1930—40-е годы имеют особое значение в истории церкви в Армении, когда в 1930—36 гг., используя всеобщую коллективизацию, были репрессированы священники сельских местностей, а в 1937—38 гг., в годы массовых репрессий, была истреблена элита духовенства. В целом за 1930—38 гг. в Армении были репрессированы 160 церковнослужителей, в том числе 148 представителей армянской апостольской, 7—армянской католической и 5—армянской евангелистской церквей, расстреляны 91, приговорены на 10 лет заключения 15, на 5 лет — 33, на 3 года — 22 священника и т. д.

После смерти Сталина новое руководство СССР пересмотрело свое отношение к событиям этого периода. В результате этого в 1950—60-х годах в Армении были реабилитированы 50, а в конце 1980-х, в начале 1990-х годов — 88 священников. 14 июня 1994 г. Верховный Совет третьей республики Армении также обратился к этим страшным годам и принял закон «О репрессированных», чем проявил свое моральное отношение к данным событиям.